

Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. փետրվարի 25-ի թիվ 39-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ
ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս	3-4 էջ
2. Ասփոփագիր	5-6 էջ
3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ	6-7 էջ
4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները	7-8 էջ
5. Անհամադասասեանոթությունների վերաբերձալ գրադոդմներ	8-19 էջ
6. Հաշվեքննությանը արձանագրված աՅԼ քասեր	19-22 էջ
7. ՀեՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑ	23 էջ
8. Ադաճարկոթոթոններ	23-24 էջ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 177-Ա որոշում:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Հաշվեքննության առարկան

Մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

Հաշվեքննության չափանիշները

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն որոշում, ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 163-Ն որոշում, ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 730-Ն որոշում, ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշում, ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի մարտի 13-ի թիվ 254-Ն հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունիսի 1-ի 69-Ա/1 հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հունիսի 30-ի թիվ 79-Ա հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 13-ի թիվ 751-Ն հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հուլիսի 30-ի 79-Ա հրաման և կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտեր:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը :

Հաշվեքննության կատարման ժամկետը 2020 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2021 թվականի փետրվարի 25-ը: ՀՀ հաշվեքննիչ պալատի 03.12.2020թ. թիվ 205-Ա որոշմամբ հաշվեքննությունը կասեցվել է, իսկ 25.12.2020թ. թիվ 248-Ա որոշմամբ՝ վերսկսվել:

Հաշվեքննության մեթոդաբանությունը Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության գործող մեթոդաբանությունների համաձայն:
Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

2.1 Մի շարք դեպքերում նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ինն ամիսների Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում չի արտացոլվել որոշ միջոցառումների մասով ինն ամիսների տարբեր ամիսներին կատարված աշխատանքների վերաբերյալ հայտերի /կատարողականների/ գումարները: Այսինքն, ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված որոշ միջոցառումների մասով Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերի ցուցանիշը չի համապատասխանում ինն ամիսների ընթացքում փաստացի կատարված ծավալներին: Մասնավորապես. թվով 8 դեպքում ընդամենը 167,294,39 հազ. դրամի չափով աշխատանքներ/ծառայություններ է կատարված ինն ամիսների տարբեր ամիսներին և սահմանված ժամանակահատվածի ընթացքում հայտ /կատարողական/ է ներկայացված նախարարություն, մինչդեռ դրանք չեն ներառվել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ինն ամիսների Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում: Ընդ որում, այս պարագայում նույն չափով էլ կառաջանար կրեդիտորական պարտավորություններ: Միևնույն ժամանակ 1-ին կիսամյակում արձանագրվել էր թվով 19 ծրագրային միջոցառումներ՝ 154,028.69 հազ. դրամի կատարողականների չափով, որոնք չէին ընդգրկվել առաջին կիսամյակի համապատասխան ծրագրերի Ձև-2 հաշվետվությունների փաստացի ծախսերի ցուցանիշներում: Սակայն ինն ամիսների ընթացքում, առաջին կիսամյակի 19 ծրագրային միջոցառումների փոխարեն, առկա է 8-ը՝ 11-ով պակաս, սակայն գումարային արտահայտությամբ՝ 13,265.7 հազ. դրամ-ով ավելին:

Այսպիսով, առկա է անհամապատասխանություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի և ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի «օրինակելի ձև ՀՀ-2 լրացման պահանջներ» մասի 9-րդ կետով, «Ընդհանուր դրույթներ» մասի 2-րդ կետի 3-րդ ենթակետով, «Հաշվետվությունների կազմն ու բովանդակությունը» մասի 5-րդ և «Հաշվետվությունների ամփոփումն ու ներկայացումը» մասի 14-րդ կետերով սահմանված պահանջների հետ:

2.2 Միևնույն ժամանակ դրա հետ կապված «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» հաշվետվություններում չի ներառվել ինն ամիսների ընթացքում տարբեր ամիսներին գոյացած կրեդիտորական պարտքերը՝ նույն 167,294,39 հազ. դրամի չափով:

2.3 Վերլուծելով փաստացի ծախսերի և հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը արձանագրվեց, որ մի շարք ծրագրային միջոցառումների դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Ընդ

որում կատարողականների ցուցանիշները որպես կանոն հաշվարկվում են հիմք ընդունելով դրամարկղային ծախսի ցուցանիշը: Սակայն եթե հաշվի առնենք փաստացի ծախսի ցուցանիշը, որը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կատարված աշխատանքները, ապա փաստացի ծախսի և ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը կարտահայտի հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների փաստացի կատարողականը: Մասնավորապես թվով 4 ծրագրային միջոցառումների դեպքում առկա է ճշտված պլանի նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված փաստացի ծախսերի գերակատարում:

2.4 Թվով 6 ծրագրային միջոցառումների դեպքում՝ ընդհանուր 19,229.9 հազ. դրամ ճշտված պլանով առկա է ինն ամիսների պլանավորում, սակայն դրամարկղային ծախսի կատարողականը 0% է եղել:

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում: Ուսումնասիրելով ներկայացված տեղեկատվությունը, օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային /LSFINANCE և LSREP/ համակարգերի շտեմարաններից, ինչպես նաև հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Վերը նշվածը, ինչպես նաև ՀՀ տարածքում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված հանգամանքները, զգալի դժվարություններ են առաջացրել հաշվեքննությունն ըստ ծրագրերի և միջոցառումների կատարման ռիսկերի ամբողջական և համակողմանի գնահատման գործընթացում: Հաշվի առնելով այդ հանգամանքը, 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների հաշվեքննության իրականացման համար որպես ռիսկային խնդիր է դիտարկվել՝ նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականի թերակատարումների և բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալները մասնակի ընդգրկելու, իսկ որոշ դեպքերում առհասարակ չներառելու խնդիրները:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, իսկ հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն ու հաշվեքննության առարկային վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի բյուջեի ծախսերի տարեկան պլանը կազմել է 31,339,021.1 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը կազմել է 20,534,365.1 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 10,804,656.0 հազ. դրամի չափով նվազեցում: Նվազեցումը հիմնականում պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 ծրագրով նախատեսված 10,430,507.5 հազ. դրամ գումարը բյուջետային համապատասխան մարմիններին բաշխմամբ:

Ինն ամիսների պլանը կազմել է 22,322,700.7 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 15,682,590.32 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 6,640,110.38 հազ. դրամի նվազեցում 29.75%-ի չափով: Նվազեցումը հիմնականում պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 ծրագրով նախատեսված 7,079,664.0 հազ. դրամ գումարից 6,954,175.7 հազ. դրամը բյուջետային համապատասխան մարմիններին բաշխմամբ, արդյունքում նշված ծրագրով ճշտված պլանը կազմել է 125,488.3 հազ. դրամ: Կատարվել է նաև ավելացումներ, օրինակ «18 տարեկանից բարձր տարիքի անձանց համայնքային փոքր տներում խնամքի կազմակերպման համար անշարժ գույքի ձեռքբերում» 1032-31001 ծրագրով տարեկան պլանավորում չի իրականացվել, սակայն տարեկան ճշտված պլանով այն կազմել է 21,246.4 հազ. դրամ, ընդ որում 9 ամիսների համար նախապես որևէ գումար չի պլանավորվել, ճշտված պլանը կազմել է նույն՝ 21,246.4 հազ. դրամը:

Դրամարկղային ծախսը կազմել է 9,457,667.23 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմում է 6,224,923.09 հազ. դրամ, կատարման տոկոսը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ կազմում է 60.31 տոկոս: Փաստացի ծախսը կազմել է 10,981,152.27 հազ. դրամ, դրամարկղային ծախսի նկատմամբ տարբերությունը կազմում է 1,523,485.04 հազ. դրամ, փաստացի կատարման տոկոսը հաշվի առնելով փաստացի ծախսը /կատարողականը/ ճշտված պլանի նկատմամբ կկազմի 70.02 տոկոս: Դեբիտորական պարտքը կազմել է 1,527,312.45 հազ. դրամ, կրեդիտորական պարտքը՝ 1,051,552.31 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները ըստ ծրագրերի և միջոցառումների ներկայացվում է կից հավելված 1-ով՝ բյուջետային ծրագրերի աղյուսակի տեսքով, որտեղ ներկայացված է նաև անհամապատասխանության վերաբերյալ գրառումները:

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Վերլուծվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2020 թվականի ինն պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների կատարման վերաբերյալ տվյալները: Արդյունքում արձանագրվել է, որ ծրագրային միջոցառումների ճնշող մեծամասնությունում դրամարկղային ծախսի մասով առկա է ճշտված պլանի նկատմամբ թերակատարումներ: Դրանց գերակշռող մասում թերակատարումները առկա է նաև փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով: Միևնույն ժամանակ փաստացի ծախսի մասով ճշտված պլանի նկատմամբ որոշ դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Հիմնականում որպես թերակատարման պատճառ նշվել է ՀՀ տարածքում համավարակի /COVID-19/ հետևանքով առաջացած դժվարությունները, ինն ամիսների ընթացքում շահառուների թվաքանակի պակաս լինելը, որոշ ծախսային հոդվածներով փաստացի պակաս ծախս կատարելու, գնման ընթացակարգերի (մրցույթների) պլանավորված ժամանակին չկայանալու կամ չամփոփվելու և համապատասխան պայմանագրերը ուշ կնքելու, ինչպես նաև որոշ դեպքերում հայտերը /կատարողականները/ կիսամյակի ավարտից հետո՝ սահմանված ժամկետում չներկայացնելու հանգամանքը: Սակայն հարկ է նշել, որ մի շարք դեպքերում նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն

ներկայացված առաջին կիսամյակի Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում չի արտացոլվել որոշ միջոցառումների մասով ինն ամիսների ընթացքում տարբեր ամիսներին կատարված աշխատանքների վերաբերյալ հայտերի /կատարողականների/ գումարները, ինչը որևէ ձևով չի կարող հիմնավորվել վերը նշված պատճառաբանություններով: Այսինքն, ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված որոշ միջոցառումների մասով Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերի ցուցանիշը չի համապատասխանում ինն ամիսներում փաստացի կատարված աշխատանքներին: Մասնավորապես. թվով 8 դեպքում ընդամենը 167,294.39 հազ. դրամի չափով աշխատանքներ է կատարված ինն ամիսների ընթացքում տարբեր ամիսներին և սահմանված ժամանակահատվածի ընթացքում հայտ /կատարողական/ է ներկայացված նախարարություն, մինչդեռ դրանք չեն ներառվել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ինն ամիսների Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում: Ընդ որում, այս պարագայում նույն չափով էլ կառաջանար կրեդիտորական պարտավորություններ: Այսպես՝

1. 1088-12006 ծր./ Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում/՝ 89,969.66 հազ. դրամ,

2. 1088-12009 ծր. / Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց, երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում/՝ 35,147.2 հազ. դրամ,

3. 1088-12010 ծր./ Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում/՝ 11,437.02 հազ. դրամ,

4. 1088-12011 ծր./ Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում/՝ 7,672.5 հազ. դրամ,

5. 1153-11001 ծր./ Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում/՝ 4,541.7.0 հազ.դրամ,

6. 1088-12002 ծր./ Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում/՝ 1,275.28 հազ. դրամ,

7. 1088-12003 ծր./ Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում/՝ 1,605.5 հազ. դրամ,

8. 1088-12004 ծր./ Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում/՝ 15,645.53 հազ. դրամ,

Միևնույն ժամանակ 1-ին կիսամյակում արձանագրվել էր թվով 19 ծրագրային միջոցառումներ՝ 154,028.69 հազ. դրամի կատարողականների չափով, որոնք չէին ընդգրկվել առաջին եռամսյակի համապատասխան ծրագրերի Ձև-2 հաշվետվությունների փաստացի ծախսերի ցուցանիշներում: Ինն ամիսների ընթացքում, առաջին կիսամյակի 19 ծրագրային միջոցառումների փոխարեն, առկա է 8-ը՝ 11-ով պակաս, սակայն արժեքային արտահայտությամբ՝ 13,265.7 հազ. դրամ-ով ավելին:

Հարկ է նշել, որ ՀՀ ֆինանսների նախարարության 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի «օրինակելի ձև Հ-2 լրացման պահանջներ» մասի 9-րդ կետի համաձայն «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» աղյուսակի «ԺԱ» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները, հաշվարկված աշխատավարձի ու կրթաթոշակների գծով կատարված ծախսերը:

Միևնույն ժամանակ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի՝

- «Ընդհանուր դրույթներ» մասի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն «Հաշվետու ժամանակահատված է համարվում տվյալ ֆինանսական տարվա այն ժամանակահատվածը, որի ընթացքում իրականացված գործառնությունների վերաբերյալ կամ որի ավարտի դրությամբ ներկայացվում է հաշվետվությունը»:
- «Հաշվետվությունների կազմն ու բովանդակությունը» մասի 5-րդ կետի համաձայն «Հաշվետվության թվային մասն արտացոլում է հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ, տվյալ ժամանակահատվածի կտրվածքով, համապատասխան բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսական գործունեության վերաբերյալ թվային ցուցանիշները»:
- «Հաշվետվությունների ամփոփումն ու ներկայացումը» մասի 14-րդ կետի համաձայն «Տարածամկետ հաշվետվությունները ներկայացվում են շաբաթական, ամսական, եռամսյակային և (կամ) տարեկան պարբերականությամբ, և դրանցում արտացոլվում է հաշվետու մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածի ընթացքում իրականացված որոշակի գործառնությունների կամ վերջինիս տրամադրության տակ գտնվող

որոշակի ակտիվների և (կամ) պարտավորությունների շարժի մասին տեղեկատվությունը»:

Համաձայն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի «Պետական մարմնի գլխավոր ֆինանսիստը, սահմանված կարգով պետական հիմնարկներից ստանալով հաշվետվությունները, ամփոփում է դրանք և լիազոր մարմնի սահմանած կարգով ներկայացնում է վերջինիս:

Պետական հիմնարկներից ստացված հաշվետվություններից բացի, գլխավոր ֆինանսիստն ապահովում է նաև պետական մարմնի կողմից իրականացվող միջոցառումների և ծրագրերի կատարման մասին հաշվետվությունների ամփոփումը և լիազոր մարմին ներկայացնելը:

Գլխավոր ֆինանսիստը հաշվետվության հետ միասին լիազոր մարմին է ներկայացնում նաև հաշվետվության մանրամասն վերլուծությունը՝ ծրագրի համեմատ շեղումների պատճառների բացահայտմամբ:

Այսպիսով, առկա է անհամապատասխանություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի և ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի վերը նշված կետերով սահմանված պահանջների հետ, ինչը հիմք է տալիս արձանագրելու, որ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում «իրականացված գործառնություններ», «ակտիվների և շարժի մասին տեղեկատվությունը», «համապատասխան բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսական գործունեության վերաբերյալ թվային ցուցանիշները», մասնավորապես ինն ամիսների ընթացքում տարբեր ամիսներին կատարված աշխատանքներ թվով 8 միջոցառումների մասով 167,294.39 հազ. դրամի չափով, ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 254-Ն հրամանով սահմանված «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ձև Հ-2 հաշվետվություններում չի ներառվել: Միևնույն ժամանակ դրա հետ կապված «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» հաշվետվություններում չի ներառվել ինն ամիսների ընթացքում տարբեր ամիսներին գոյացած կրեդիտորական պարտքերը՝ նույն 167,294.39 հազ. դրամի չափով:

Անհամապատասխանության վերաբերյալ գրառումները ներկայացվում է կից հավելված 1-ով՝ բյուջետային ծրագրերի աղյուսակի տեսքով: Միևնույն ժամանակ ստորև ներկայացվում է վերոնշյալ անհամապատասխանությունների վերաբերյալ արձանագրվածի էությունը բնորոշող օրինակներ:

Մասնավորապես.

- Ծրագիր 1088-12006, << Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում>>- Հաշվետվություն ձև 2-ում 9 ամիսների դրամարկղային և փաստացի ծախսերը համընկնում են, որը կազմել է 335,736.36 հազ. դրամ, կրեդիտորական պարտքը՝ 0: 9 ամիսների կատարման %-ը 9 ամիսների ճշտված պլանի նկատմամբ հաշվի առնելով և դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը կազմել է 56.65 %, ընդ որում 1-ի կիսամյակի կատարման %-ը հաշվի առնելով 9 ամիսների դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը՝ 9 ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 22.7 %, կատարման տեմպը ավելացել է 33.95 %-ով /56.65-22.7/: Միևնույն ժամանակ ըստ գործակալության տեղեկանքի 08.10.2020թ.-ին ներկայացվել է սեպտեմբեր ամսվա համար 89,969.66 հազ. դրամի ֆինանսավորման հայտ, որը չի ընդգրկվել 9 ամիսների Ձև Հ-2 հաշվետվության փաստացի ծախսերի մեջ: Արդյունքում հաշվետվություն ձև 2-ում արտացոլված ցուցանիշները չի արտացոլում 9 ամիսների կատարված աշխատանքների իրական պատկերը: Շահառուների տարեկան պլանային թիվը կազմել է 2923, 9 ամիսների նախատեսվել է 2862 շահառու, սպասարկվել է 6365-ը, ընդ որում 1 կիսամյակում նախատեսվել է 1461 շահառու, փաստացին՝ 1586: Պահանջարկից ելնելով՝ իրականացվել են նախատեսվածից ավել թվով ծրագրեր: Ծրագրերն իրականացվել են միջինում նախատեսվածից քիչ ֆինանսական միջոցներով: Քանակային ցուցանիշների գերակատարման պայմաններում արժեքային ցուցանիշների թերակատարումները /տնտեսումները/ հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով,

որ պլանային գումարը հաշվարկվել է ծրագրով նախատեսված առավելագույն արժեքներով, իսկ աշխատանքները կատարվել են ավելի ցածր արժեքներով, որը պայմանավորված է նրանով, թե որ մարզերում են իրականացվել և ինչ բնույթի և աշխատատարության աշխատանքներ են կատարվել:

- **Ծրագիր 1088-12009, << Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց, երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում>>-**
 Հաշվետվություն ձև 2-ում 1 կիսամյակի դրամարկղային և փաստացի ծախսերը համընկնում են՝ 252,718.7 հազ. դրամ: Կրեդիտորական պարտքը՝ 0: Դրամարկղային և փաստացի ծախսերի 9 ամիսների կատարման %-ը 9 ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմում է 63.18 %, ընդ որում 1-ին կիսամյակի կատարման %-ը 1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 49.2 %, կատարման տեմպը հաշվի առնելով և դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը ավելացել է 13.98 %-ով /63.18-49.2/: Միևնույն ժամանակ համաձայն գործակալության տեղեկատվության 06.10.2020թ. ներկայացվել է սեպտեմբեր ամսվա համար 35,147.2 հազ. դր. կատարողականի հայտ պահանջագիր, որը չի ընդգրկվել հաշվետվություն ձև 2-ում: Արդյունքում հաշվետվություն ձև 2-ում արտացոլված ցուցանիշները չի արտացոլում 9 ամիսներում կատարված աշխատանքների իրական պատկերը: Տարեկան նախատեսվել է 600 շահառու, 9 ամիսներում նախատեսվել է սպասարկել 540 շահառու, փաստացին կազմել է 480: 1 կիսամյակում նախատեսվել է սպասարկել 420 շահառու, փաստացի շահառուների թիվը կազմել է 370: Չնայած ծրագրում ընդգրկվել ցանկացողների թիվը մեծ էր, սակայն, կապված արտակարգ դրության հետ, նախնական պայմանավորվածությունները հետաձգվել են:

Թերակատարումը պայմանավորված է նախատեսվածից քիչ թվով
շահառուների ընդգրկմամբ:

- Ծրագիր 1088-12010, << Աշխատաշուկայում անմրցունակ և
մասնագիտություն չունեցող մայրերի համար գործատուի մոտ
մասնագիտական ուսուցման կազմակերպում>>- Հաշվետվություն ձև 2-ում 1
կիսամյակի դրամարկղային և փաստացի ծախսերը համընկնում են՝
40,715.51 հազ. դրամ: Կրեդիտորական պարտքը՝ 0: Դրամարկղային և
փաստացի ծախսի 9 ամիսների կատարման %-ը 9 ամիսների ճշտված պլանի
նկատմամբ կազմում է 35.05 %, ընդ որում 1-ին կիսամյակի կատարման %-ը
1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 19.1 %, կատարման
տեմպը հաշվի առնելով և դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը
ավելացել է նվազել է 22.9 %-ով 15.95 % /35.05-19.1/: Միևնույն ժամանակ
համաձայն գործակալության տեղեկատվության 06.10.2020թ. ներկայացվել է
սեպտեմբեր ամսվա համար 11,437,02 հազ. դր. կատարողականի հայտ
պահանջագիր, որը չի ընդգրկվել հաշվետվություն ձև 2-ում: Արդյունքում
հաշվետվություն ձև 2-ում արտացոլված ցուցանիշները չի արտացոլում 9
ամիսների կատարված աշխատանքների իրական պատկերը: Տարեկան
նախատեսվել է 200 շահառու, 9 ամիսներին նախատեսվել է սպասարկել
180 շահառու, փաստացի շահառուների թիվը կազմել է 162: 1 կիսամյակում
նախատեսվել է սպասարկել 120 շահառու, փաստացի շահառուների թիվը
կազմել է 89: Ծրագրի թերակատարումը պայմանավորված է երկրում
հայտարարված արտակարգ դրությամբ: Թերակատարումը
պայմանավորված է նախատեսվածից քիչ թվով շահառուների ընդգրկմամբ:
- Ծրագիր 1088-12011, << Վարձատրվող հասարակական աշխատանքների
կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության
ապահովում>>- Հաշվետվություն ձև 2-ում 9 ամիսների դրամարկղային և
փաստացի ծախսերը համընկնում են՝ 67,051.7 հազ. դրամ, կրեդիտորական
պարտքը՝ 0: 9 ամիսների կատարման %-ը 9 ամիսների ճշտված պլանի

նկատմամբ կազմել է 99.34 %, ընդ որում 1-ին կիսամյակի դրամարկղային և փաստացի ծախսերի կատարման %-ը 1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 37.0 %, կատարման տեմպը ավելացել է 62.34 %-ով /99.34-37.0/: Միևնույն ժամանակ համաձայն գործակալության տեղեկատվության 07.10.2020թ. ներկայացվել է սեպտեմբեր ամսվա համար 7,672.5 հազ. դր. կատարողականի հայտ պահանջագիր, որը չի ընդգրկվել հաշվետվություն ձև 2-ում: Արդյունքում հաշվետվություն ձև 2-ում արտացոլված ցուցանիշները չի արտացոլում 9 ամիսների կատարված աշխատանքների իրական պատկերը: Տարեկան նախատեսվել է 600 շահառու՝ 60 ծրագիր, 9 ամիսներին նախատեսվել է իրականացնել 45 ծրագիր՝ սպասարկել 450 շահառու, փաստացի ծրագրերի թիվը կազմել է 54՝ սպասարկվել է 508 շահառու, ընդ որում 1 կիսամյակում նախատեսվել էր իրականացնել 30 ծրագիր՝ սպասարկել 300 շահառու, փաստացի ծրագրերի թիվը կազմել է 39, շահառուների թիվը կազմել է 397: Պահանջարկից ելնելով՝ իրականացվել են նախատեսվածից ավել թվով ծրագրեր: Ծրագրերը իրականացվել են միջինում նախատեսվածից քիչ ֆինանսական միջոցներով: Ծրագրերի և շահառուների ավելի լինելու հանգամանքը պայմանավորված է նրանով, որ համաձայն ՀՀ կառ, 17.04.2014թ. թ. 534-Ն որոշման, վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ժամանակացույցը, աշխատանքների բնույթը, դրանց սկիզբն ու ավարտը, հատկացված ֆինանսական միջոցների չափը հաստատվում է մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 25-ը՝ ՀՀ մարզպետների կողմից համաձայնեցնելով նախարարության հետ:

- Ծրագիր 1088-12004, << Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում >>- 2020թ. 9 ամիսների համար պլանավորվել է 156 500,0 հազ. դրամ: Հաշվետվություն ձև 2-ում 1 կիսամյակում դրամարկղային և փաստացի ծախսերը համընկնում են,

որը կազմել է 84 090,22 հազ. դրամ, կրեդիտորական պարտք՝ 0 դրամ: 9 ամիսների կատարման %-ը 9 ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 53,7 %, ընդ որում 1-ին կիսամյակի կատարման %-ը կազմել է 39,9 %, կատարման տեմպը հիմք ընդունելով և դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը աճել է 13,8 %-ով: Սեպտեմբեր ամսվա հայտը ներկայացվել է հոկտեմբերի 7-ին 15 645,53 հազ. դրամ գումարի չափով և 9 ամիսների հաշվետվություն ձև 2-ի փաստացի ծախսերի մեջ չի ընդգրկվել: Շահառուների ընդհանուր թիվը 1-ին կիսամյակի համար կազմել է Պլան - 220, փաստ - 162, իսկ 9 ամիսների համար՝ պլան - 350, փաստ - 326: Համավարակի հետևանքով շատ գործատուների կողմից գործունեության կասեցման կամ հեռավար աշխատանքի անցնելու պատճառով իրականացվել է նախատեսվածից քիչ թվով ծրագրեր: Այս ծրագրում ընդգրկվելու իրավունք ունեցողների թվաքանակում հաշմանդամություն ունեցողներ գրեթե չկան: Ֆինանսավորման թերակատարումը պայմանավորված է ծրագրում նախատեսվածից քիչ թվով շահառուների ընդգրկմամբ:

- Ծրագիր 1011-11002, <<Համայնքային ենթակայության սոցիալական ծառայությունների կողմից սոցիալական աջակցության քաղաքականության իրականացման ապահովում>>- 2020թ 9-ամիսների համար ՍԱՏԿ- ների պահպանման ծախսերը պլանավորվել է 352,983.3 հազ.դրամ: Համաձայն հաշվետվություն ձև-2-ի դրամարկղային ծախսը կազմել է 352,981.6 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 402,532.6 հազ. դրամ: Համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 49,551.0 հազ. դրամ: Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը՝ 9-ամիսների ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 114.0 % ($402,532.6/352,983.3 \cdot 100$), ընդ որում 6-ամիսների համար հաշվետվություն ձև 2-ում նշված փաստացի ծախսի կատարման

%-ը 6-ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 118.5%, կատարման տեմպը նվազել է 4.5%-ով (118.5-114.0): Հիմք ընդունելով դրամարկղային ծախսի 9-ամիսների կատարման %-ը 9-ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 100.0%, ընդ որում 6-ամիսների կատարման % կազմել է 100.0%, կատարման տեմպը չի փոխվել:

- Ծրագիր 1117-11004, << Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ>>- 2020թ. 9 ամիսների համար պլանավորվել է 210,806.5 հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև <- 2-ի դրամարկղային ծախսը կազմել է 210,806.5 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 245,219.1 հազ. դրամ, հաշվետվություն ձև < 4 նշված կրեդիտորական պարտք տարեվերջին՝ 34,412.6 հազ. դրամ: Եթե դիտարկենք ընդհանուր կատարողականը հաշվի առնելով հաշվետվություն ձև <- 2-ում նշված 9 ամիսների փաստացի ծախսը, ապա ճշտված պլանի նկատմամբ կատարման %-ը կկազմի 116,3%: $/245,219.1/210,806.5*100/$, ընդ որում 1-ին կիսամյակի համար հաշվետվություն ձև <- 2-ում նշված փաստացի ծախսի կատարման % -ը 1-ին եռամսակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 100%, կատարման տեմպը աճել է 16,3 %-ով $/116,3-100,0/$: Հիմք ընդունելով դրամարկղային ծախսը՝ 9 ամիսների կատարման %-ը 9 ամիսների ճշտված պլանի նկատմամբ կազմել է 100%, ընդ որում 1-ին կիսամյակի կատարման %-ը կազմել էր 100%, կատարման տեմպը չի փոփոխվել:

<< աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ինն ամիսների ելքային ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերի ցուցանիշները և դրանց յուրաքանչյուրի մասով կատարողականների վերաբերյալ ամբողջական տվյալները և անհամապատասխանությունների

վերաբերյալ նկատառումները ներկայացված է կից ներկայացվող թիվ 1 հավելվածով:

Հաշվեքննության օբյեկտի ներկայացրած պարզաբանումները և դրանց վերաբերյալ հաշվեքննողների արձագանքը

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 17.02.2021թ. ՄԱ/6709-2021 գրությամբ ներկայացվել է պարզաբանում <<<< աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության վերաբերյալ>>:

Թիվ 1. «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» միջոցառման (1032-11007) մասով՝

«Հաշվեքննողի կողմից ճշտված տվյալներ» սյունակում նշված է, որ Ձև2 հաշվետվության փաստացի ծախսի գումարի մեջ չի ներառվել սեպտեմբեր ամսվա փաստացի կատարված 632.0 հազ. դրամի գումար: Մինչդեռ ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած սեպտեմբեր ամսվա կատարողականի գումարը կազմել է 1401.8 հազ. դրամ, որը ներառված է ինն ամսվա Ձև2 հաշվետվության փաստացի ծախսում:

Հաշվեքննողների արձագանքը թիվ 1-ի վերաբերյալ

Ընդունվել է, կատարվել է ճշգրտում:

Թիվ 2. 1141 ծրագրի 12001 միջոցառման շահառուների փաստացի թիվը 9 ամիսներին եղել է 302, 12002 միջոցառման շրջանակում բնաիրային օգնություն են ստացել փաստացի 610 ընտանիք՝ 200-ի փոխարեն, 11009 միջոցառման շահառուների թիվը փաստացի 600՝ 524-ի փոխարեն, 11018 միջոցառման փաստացի շահառուների թիվը 3566՝ 2500-ի փոխարեն, 11001 միջոցառման շահառուների թիվը 583՝ 574-ի փոխարեն, իսկ տարեցների մասով՝ միայն 1032 ծրագրի 11002 միջոցառման 9 ամիսների փաստացի շահառուների թիվը 3072-ի փոխարեն պետք է լինի 3067:

Հաշվեքննողների արձագանքը թիվ 2-ի վերաբերյալ

1. 1141-12001, 1141-12002, 1141-11018, 1141-11001 - ներկայացված ցուցանիշները ներառվել է աղյուսակի համապատասխան մասերում՝ միևնույն ժամանակ պահպանելով մեր կողմից նշված ցուցանիշները, քանի որ դրանք վերցված է Հայաստանի Հանրապետության 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ

միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների հաշվետվությունից, հավելված 11.1, որի համար հիմք է հանդիսացել նախարարությունից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ցուցանիշները:

Առաջարկություն նախարարությանը–

Քննարկել 1141-12001, 1141-12002, 1141-11018 և 1141-11001 միջոցառումների մասով Հայաստանի Հանրապետության 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների հաշվետվությունում՝ հավելված 11.1-ում նշված քանակական ցուցանիշների և Նախարարության կողմից ներկայացված ցուցանիշների տարբերության հանգամանքները:

2. 1141-11009, 1032-11002 -ընդունվել է, կատարվել է ճշգրտում

Թիվ 3. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումների մասով հարկ է նշել, որ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվելիք 2020 թվականի 4-րդ եռամսյակի Ձև2 հաշվետվությունների փաստացի ծախսերում ներառվել են ներկայացված բոլոր կատարողականները (հայտերը):

Հաշվեքննողների արձագանքը

Ընդունվել է ի գիտություն:

6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Վերլուծելով փաստացի ծախսերի և հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը պարզվեց, որ մի շարք ծրագրային միջոցառումների դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Ընդ որում կատարողականների ցուցանիշները որպես կանոն հաշվարկվում են հիմք ընդունելով դրամարկղային ծախսի ցուցանիշը: Սակայն եթե հաշվի առնենք փաստացի ծախսի ցուցանիշը, որը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կատարված աշխատանքները, ապա փաստացի ծախսի և ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը կարտահայտի հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների փաստացի կատարողականը: Մասնավորապես թվով 4 ծրագրային միջոցառումների

դեպքում առկա է ճշտված պլանի նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված փաստացի ծախսերի գերակատարում: Այսպես օրինակ.

1. 1011-11002 ծր./ Համայնքային ենթակայության սոցիալական ծառայությունների կողմից սոցիալական աջակցության քաղաքականության իրականացման ապահովում/ ճշտված պլանը կազմել է 352,983.3 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 402,532.6 հազ. դրամ, կատարողականը կկազմի 114.0 %:

2. 1141-12003 ծր./ Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում/ ճշտված պլանը կազմել է 150.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 200.0 հազ. դրամ, կատարողականը՝ 133.3%:

3. 1032-11005 ծր./ Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ/ ճշտված պլանը կազմել է 41,561.6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 44,900.6 հազ. դրամ, կատարողականը կկազմի՝ 108.0%:

4. 1117-11004 ծր./ Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ/ ճշտված պլանը կազմել է 210,806.5 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 245,219.1 հազ. դրամ, կատարողականը կկազմի՝ 116.3%:

Թվով 6 ծրագրային միջոցառումների դեպքում՝ ընդհանուր 19,229.9 հազ. դրամ ճշտված պլանով ինն ամիսների համար առկա է պլանավորում, սակայն դրամարկղային ծախսի կատարողականը 0% է եղել: Մասնավորապես,

1. 1032-31002 ծր. /18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի համայնքային փոքր տների շենքային պայմանների բարելավում/ ճշտված պլանը կազմել է 2,887.5 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:

2. 1088-11002 ծր./ Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում/ ճշտված պլանը կազմել է 5,600.0 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:

3. 1160-11005 ծր. / Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների ծրագրի իրականացման ապահովում/ ճշտված պլանը կազմել է 1,560.4 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:

4. 1141-12006 ծր./ Աջակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններում շենքային պայմանների բարելավման աշխատանքներին/ ճշտված պլանը կազմել է 7,500.0 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:

5. 1141-12007 ծր./ Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների համար բնակարանների վարձակալություն/՝ ճշտված պլանը կազմել է 1,080.0 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:
6. 1098-12003 ծր./ Հայաստանի Հանրապետության Մանկատան շրջանավարտներին բնակարանի ապահովում/՝ ճշտված պլանը կազմել է 602.0 հազ. դրամ, կատարողականը՝ 0 %:
- Ընդ որում առաջին կիսամյակում առկա էր 9 միջոցառում, որի կատարողականը 0 է եղել՝ 96,461.1 հազ. դրամի ճշտված պլանի պայմաններում:

Հաշվեքննության օբյեկտի ներկայացրած պարզաբանումները և դրանց վերաբերյալ հաշվեքննողների արձագանքը

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը- Ինչ վերաբերում է ճշտված պլանի նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված փաստացի ծախսերի գերակատարմանը, ապա դա պայմանավորված է նախորդ ամսվա կատարողականի գումարը հաջորդ ամիս վճարելու հանգամանքով, որի հիման վրա էլ կատարվում է պլանավորում:

Հաշվեքննողների արձագանքը

Չի ընդունվել- Նշված պարզաբանումը չի կարող հանդիսանալ որպես պատճառ կատարողականի ցուցանիշի գերակատարման համար, քանի որ պլանավորումը հստակ կատարվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարվելիք բոլոր աշխատանքների համար, իսկ դրամարկղային ծախսի և փաստացի ծախսի կատարողականների գնահատականը տրվում է ճշտված պլանի նկատմամբ կոնկրետ հաշվետու ժամանակաշրջանում կատարված դրամարկղային և փաստացի ծախսերի հարաբերակցությամբ: Իսկ հաշվետու ժամանակաշրջանում դրամարկղային և փաստացի ծախսերը պարտադիր պետք է արտացոլվեն հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվություններում: Հաշվի առնելով վերոգրյալը նշենք, որ Ձեր կողմից նշված նախորդ ամսվա կատարողականի գումարը հաջորդ ամիս վճարելու հանգամանքը չի կարող հանդիսանալ կատարողականի գերակատարման պատճառ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը- Ճշտված պլանով առկա, սակայն դրամարկղային ծախս չունեցող 6 ծրագրային միջոցառումների վերաբերյալ

1. 1032 ծրագրի «31002.18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի համայնքային փոքր տների շենքային պայմանների բարելավում» միջոցառում- Սույն միջոցառումը հայտարարվել է մրցույթ, սակայն հայտ չի ներկայացվել: Շենքային պայմանների բարելավումը իրականացվել է չորրորդ եռամսյակում:
2. 1088 ծրագրի «11002. Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում» ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսվել է հատկացնել 7, 000.0 հազ. դրամ՝ 10 տոնավաճառի կազմակերպման համար, 9 ամսվա համար՝ 5600,0 հազ. դրամ՝ 8 տոնավաճառի կազմակերպման համար: Տոնավաճառի կազմակերպման համար 1-ին կիսամյակում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կազմակերպվել է մրցույթ, որի արդյունքում պայմանագիր է կնքվել հաղթող ճանաչված կազմակերպության հետ: Սակայն, հաշվի առնելով ծրագրի իրականացման անհնարինությունը՝ պայմանավորված համաճարակի բռնկման և դրա հետևանքով հայտարարված արտակարգ իրավիճակով, կազմակերպության հետ կնքվել է համաձայնագիր՝ պայմանագիրը լուծելու համար: Ուստի այս ծրագիրը մինչև տարեվերջ չի իրականացվել:
3. 1160 ծրագրի «11005. Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների ծրագրի իրականացման ապահովում» միջոցառում- Սույն միջոցառումը 2020 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում դրամարկղային ծախս չկատարելու հանգամանքը պայմանավորված է գնման ընթացակարգով:
4. 1141 ծրագրի «12006. Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցություն» միջոցառում- Սույն միջոցառումը 2020 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում դրամարկղային ծախս չկատարելու հանգամանքը պայմանավորված է նրանով, որ աջակցության տվյալ միջոցառումը 2020 թվականին իրականացվել էր առաջին անգամ, իսկ հաշվետու ժամանակահատվածում՝ երկրում ստեղծված համաճարակային և պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ ծրագրի վերաբերյալ պատշաճ իրազեկում չի իրականացվել և առաջին 9 ամիսների ընթացքում համապատասխան ծրագրի շրջանակում ֆինանսական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումներ չեն ներկայացվել: Տարվա ընթացքում /հոկտեմբեր ամսվանից սկսած/ ստացվել է թվով ընդամենը 15 դիմում՝ ֆինանսական աջակցություն տրամադրելու համար:
5. 1141 ծրագրի «12007. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների համար բնակարանների

վարձակալություն» միջոցառում- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված երեխաները հնարավորություն են ունեցել բնակարանի գնման վկայագրի ձեռքբերման՝ վերջիններս նախընտրել են օգտվել իրենց տվյալ իրավունքից՝ հետևաբար անհրաժեշտություն չի առաջացել բնակարանի վարձակալության:

6. 1098 ծրագրի «12003. Հայաստանի Հանրապետության Մանկատան շրջանավարտներին բնակարանի ապահովում» միջոցառում- Սույն միջոցառմամբ 2020 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում դրամարկղային ծախսի բացակայությունը պայմանավորված է նոտարական ծառայության դիմաց՝ նոտարների կողմից վճարման պահանջ չներկայացնելու հանգամանքով:

Հաշվեքննողների արձագանքը

1. 1160 -11005 միջոցառում- չի ընդունվել: Հաշվետու ժամանակաշրջանում դրամարկղային ծախս չկատարելու հանգամանքը նշվել է, որ պայմանավորված է գնման ընթացակարգով: Նշված հիմնավորումը անհասկանալի է, քանի որ արձանագրության կից ներկայացված թիվ 2 հավելվածի նշված միջոցառման վերաբերող մասում արձանագրվել է, որ Հաշմանդամություն ունեցող անձանց տվյալների վերաբերյալ համապատասխան ձևաթղթերի տպագրության ծառայությունների մրցույթը հայտարարվել է 05.02.2020թ, պայմանագիր կնքվել է 19.03.2020 թվականին հետևյալ մատակարարների հետ՝«ՄՈԱ» ՍՊԸ-891,6 հազ. դրամ, «ՎԱՌՄ» ՍՊԸ-1,011.1 հազ. դրամ, «ՆԱԵՎ» ՍՊԸ -106,0 հազ. դրամ, «ՍԱՔԻ» ՍՊԸ-129,71 հազ. դրամ: Առկա է նաև չկայացած չափաբաժիններ, որոնց վերաբերյալ հետագայում հայտարարվել է մրցույթ: Այսինքն մարտ ամսին արդեն իսկ առկա էր կնքված պայմանագրեր, սակայն մարտ ամսից մինչև ինն ամիսների ընթացքում որևէ ծախս չի ներկայացվել: Հետևաբար 0 կատարողական ներկայացնելը չի կարող հիմնավորվել գնման ընթացակարգերով:
2. 1032-31002, 1088 -11002, 1141-12006, 1141 -12007 և 1098-12003 միջոցառումների մասով ընդունվել է ի գիտություն:

7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 29.01.2021թ. թիվ ՄԱ/3167-2021-2020 գրությամբ ներկայացրել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների

մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության հաշվեքննության արդյունքների ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվության տրամադրման լրացված ձևաչափը: Համաձայն նշված տեղեկատվության բոլոր առաջարկություններն էլ ընդունվել են, արձանագրված բոլոր անհամապատասխանությունները վերացվել են՝ վեց ամիսների հաշվետվություններում չներառված գումարները ներառվել են ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ինն ամիսների կատարողականի հաշվետվություններում: Արձանագրված անհամապատասխանությունները այսուհետ բացառելու նպատակով ՀՀ ԱՍՀՆ գլխավոր քարտուղարի 21.09.2020 թվականի Ն/ԳՄ/26703 հանձնարարականով պատասխանատու ստորաբաժանումներին տրվել է համապատասխան հանձնարարականներ:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.

1. Գործուն միջոցներ ձեռնարկել 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարողականի հաշվետվություններում ինն ամիսների ընթացքում կատարված փաստացի ծախսի գումարների մի շարք պատճառներով չներառված տվյալների գույքագրման ու ՀՀ ֆինանսների նախարարություն հաջորդիվ ներկայացվող հաշվետվություններում դրանց ամբողջական ներկայացնելու ուղղությամբ՝ այսուհետ հնարավորինս բացառելով նշված բնույթի ֆինանսական ցուցանիշների չներառումը ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարողականի հաշվետվություններում:
2. Նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով շարունակել խստագույնս հսկել բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչների և/կամ պայմանագրային կողմերի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ներկայացվող հայտերի/կատարողականների և սահմանված հաշվետվությունների՝ ժամանակին ու ամբողջական ներկայացնելու նկատմամբ:
3. Միջոցներ ձեռնարկել ՀՀ պետական բյուջեով սահմանված ծախսերի ծրագրային ցուցանիշների թերակատարումները լրացնելու, ինչպես նաև գերակատարումները հնարավորինս բացառելու ուղղությամբ: Մասնավորապես գնման գործընթացները և այլ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն իրականացնել պլանավորված

պահանջարկի ժամկետների տրամաբանությամբ՝ պարտադիր հաշվի առնելով այդ գործընթացներում երևույթաբար առկա չկայանալու կամ ընթացքը բողոքարկելու <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով (ՀՕ-21), ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017 N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգով նախատեսված կարգավիճակները ու դրանց հետևանքում վրա հասնող ժամկետները:

4. Քննարկել 1141-12001, 1141-12002, 1141-11018 և 1141-11001 միջոցառումների մասով Հայաստանի Հանրապետության 2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների հաշվետվությունում՝ հավելված 11.1-ում նշված քանակական ցուցանիշների և Նախարարության կողմից ներկայացված ցուցանիշների տարբերության հանգամանքները:
5. Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա ընթացիկ տարվա համար (2021 թվական) մշակել և հաստատել միջոցառումների/գործողությունների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում/ներ և միջոցառման կատարման իրատեսական ու ողջամիտ ժամանակացույց 2021 թվականի համար՝ ներկայացնելով պատճենը ՀՀ հաշվեքննիչ պալատ: